

հըն<sup>1</sup> անոնց կը հայթհայթէ ինչ որ կարեւոր է: Ինչ ինչ նիւթեր ալ հարկաւ հասարակաց վաճառանոցներէ կը բերուին (114-5) սակառով, քրձով կամ մորթաւորով (43-5): — «Կէսք զգիներբուացն կազմեն խառնարանս»<sup>2</sup> մառանին մէջ, գինին մեծ եւ կամ փոքր կարասներէն (24-5) փոխադրելով թակոյկներու (79) կամ գուցէ եւ առաստակաց մէջ (81), եւ պատրաստելով ըմպանակներն հրաւիրելոց չափով: Արշակունի արքունեաց մէջ ասոնց ի պաշտօնէ գլուխ էր Գնունեաց տէրը, որ տակառուպետ կը կոչուէր, եւ «պատրաստէր զըմպելիսն արքայի յընտիր եւ համեղ գինեաց»<sup>3</sup>: Միջին դարուն այս պաշտօնեայն գինեպետ ալ կոչուած է<sup>4</sup>:

Սպասաւորաց ուրիշ մաս մ'ալ զարդարուած կոկուած<sup>5</sup>, կը սպասեն ծառայելու սեղանին վրայ՝ երբ հացկերոյթը սկսի. կամ ինչպէս Տարօնացին կ'ըսէ, «միայն բաւականանան զնոցուն պատ-

1. Խոսր. ի Հյկզ: — 2. Տար. Վերլծ: — 3. Խոսր. 76, 93: «Տակառուպետ» շինուած է պրս. տագառ (թակոյկ) արմատէն, կամ ուղղակի տագառպատ բարդէ մը (Հիւրշ. 251). եւ ի Ծննդ. Խ, 1-23, Պամ. Աղ. 177, եւն զործածուած է փոխան յն. «մատուակապետի»: — 4. Գոշ՝ Ասկ. 9. 1. ծ. Պհ. 4: — 5. Աղոնց պաշտօնակիցք շատ շքեղ կը նկարագրուին Փիլոնէ (Ճսք. 19-20). եւ ի Բիւզանդիոն էին նայնպէս «զարդարեալք յազգի ազգի հանդերձս» (Ոսկ. Թղթ. Ա, 530):